ՈՏՆԱՄԱՆՆԵՐՍ

1942 թվականին հորս տարան ռազմաճակատ: Յոթ երեխայի տեր մարդուն... Տեսա՞ք: Բարև, ընկեր Ստալին, յոթս էլ քեզ առողջություն ենք ցանկանում: Բա՛հ:

Իրիկնադեմին, համարյա արդեն աղջամուղջին, նրան ճամփա ենք դնում: Բաժանվում ենք: Մերս էլ հետը ութ հոգի ենք...

Չգիտեմ ինչու, մեր տնից քիչ ներքև՝ խաչմերուկում և ոչ թե, ասենք, մեր բակում կամ թեկուզ մեր տան դիմաց:

Ինչևէ:

Մեծը ես եմ՝ տասներկուսուկես տարեկան (հիմա մեծ եմ, թե՞ փոքր), ոսկրոտ-մոսկրոտ, բարակ վզով, վեր ծգված լակոտ եմ, ի վերջո: Մնացածները՝ քույր, եղբայր, մանրապճեղ բաներ են, հազիվ են հասնում երկարաբոյ հորս ծնկներին: Մի քանիսը գուցե մի քիչ ավելի, ախր դա ի՞նչ կարևոր է:

Թեթև, շատ բարակ ու տաք անձրև էր մաղում. Լոռիում մեծ մասամբ անձրևոտ է: Հետո հանկարծակի սառը քամի բարձրացավ, անձրևի շերտը թեքվեց ու սկսեց ասեղի նման ծակծկել մեր երեսները, օդը զգալիորեն պաղեց: Էս մանրապճեղները պատսպարվելու տեղ էին ման գալիս ու բնազդաբար մղվեցին դեպի հայրս՝ կախվելով նրա շալվարի փողքերից... Այ մարդ, երեխեն դեպի մայրը կգնա, չէ՞: Մինչև հիմա գլխի չեմ, թե ինչու մոր փեշերը թողած, մղվեցին դեպի իրենց հոր շալվարը, որ հեչ անձրևից պատսպարվելու տեղ չի: Գուցե զգում էին, որ ինչ-որ անսովոր, անբնական բան է կատարվում, լուրջ բան, հանկարծակի փոփոխություն իրենց կյանքում կամ կարևոր մի բանի կորուստ: Ասենք, երեխաների աշխարհը ո՞վ կհասկանա...

Մորս անկնճիռ, սիրուն դեմքը սպիտակել էր, դարձել կավիճ: Սիրուն աչքերն էին խլշկոտում դես ու դեն՝ շաղված հայացքով: Չոր ու ճաքճքված շուրթերը հազիվ նկատելի դողդողում էին, որպեն մեկ

զոլավոր, գորշագույն գլխաշորը քաշում էր ցած, մի քանի վայրկյան դեմքը ծածկում (էդ ժամանակ ինչ-որ խուլ ծղրտոց էի լսում) ու շատ նյարդային և շատ անբնական շարժումներով նորից կապում էր գլխին երկար ու շատ խնամքով, դուրս ընկած մազերը դարսում գլխաշորի տակ: Ու հանկարծ նորից նույնը կրկնվում էր:

Այ մամա, էդ ի՞նչ ես անում,- հարցնում եմ ես ու ծիծաղից փորս բռնում:

Դե, ի՞նչ անեմ, շատ էր զավեշտական, ես էլ՝ ծիծաղկոտի մեկը...

Ու մեկ էլ շրըխկ՝ վզակոթիս: Մորս փամփլիկ, գործերից մի քիչ կոշտացած ծանր ձեռքը...

Մերս է, իրավունք ունի, մոր խփածից կնեղանա՞ն... Կարճ, մի կերպ ինձ զսպեցի:

Ընդհանրապես, խստաբարո հայրս կարծես չնկատեց էլ մորս արարքը: Դատարկ հայացքով, ոնց որ ընդարմացած, փողոցի երկարությամբ ներքև-վերև էր պտտեցնում գլուխը:

Զարմանալին փոքրիկներն էին՝ պապանձվել, լալկվել էին, հավի՝ աշնան ուշ ճտերի պես տզաթևած, ծվարել էին իրենց հոր ծնկների արանքում...

Հանկարծ խուլ դղրդոց լսվեց ու քիչ հետո երևաց բեռնատար «ԳԱԶ» ավտոմեքենան՝ կանաչ ներկած կողերով, թափքը՝ տղամարդկանցով լիքը լցված: Հենց մեր դիմաց ճռռալով արգելակեց:

Արտաշես Շաքարի Սարգսյա՛ն,- բղավեց մեքենայի խցիկից հաստ ձայնով մի մարդ:

Հա-ա-ա՛, ես եմ,- ճլորած, իրեն ոչ հատուկ ձայնով արձագանքեց հայրս:

Շտապով բարձրացեք, նստե՛ք, ուշանում ենք:

Հայրս հայացքն իջեցրեց ցած՝ իր լալավունների վրա:

Իսկ մայրս, նորից էս անգամ կատաղի մշմշացնելով, ֆսֆսալով, գլխաշորը պոճոկեց գլխից, մազերը խռիվ եկան, ձեռքը թուլացած կախ ընկավ ու էլ չկարողացավ կապել:

Սարգսյան, չեղա՛վ,- էս անգամ հրամայական, գոռաց բամբ ձայնովը:

Հայրս քարացել էր տեղում, սևեռված նայում էր իմ ոտքերին: Հա,

հնամաշ ոտնամանիս քթից բութ մատիս ծայրը դուրս էր ցցվել, շատ չէ, էնքան, որ եղունգս էր անձրևից փայլփլում ուրախ-ուրախ:

Էրեխանց ոտները չոր կպահես,- էդ էր նրա հրաժեշտի խոսքը, նրա ապսպրանքը...

Ոչ մեկիս էլ չնայելով՝ ձեռքը մի տեսակ հուսահատ թափ տվեց, գնաց:

Վայրենի, անշնորհք,- խզված ձայնով ասաց մայրս,- կարգին մնաս բարով էլ չի անում... շան տղա, հեչ էլ պետքս չես: Գնա՛:

Մեքենան սրանց տանելու էր Քոլագերան փոքրիկ կիսակայանը, էնտեղից՝ Թիֆլիս ու դեպի ռազմաճակատ:

Մայրս, փքված թխսի նման, քթի տակ ինչ-որ անեծքներ ասելով, չգիտեմ ում հասցեագրված (կամ Հիտլերը կլիներ, կամ Ստալինը), գլխաշորը գետնին քաշ տալով, առաջ ընկավ, մեզ ձգեց դեպի տուն:

Տո՛ւն...

Պատերազմից մի տարի առաջ հերս որոշեց քարե տուն կառուցել: Ռսից առած փայտե, ընդարձակ, տաքուկ ու բարեհարմար տունը քանդեց: Հազար տարի էդ տունը կանգուն կմնար, թե ինչի՞ քանդեց: Դե, ինչ արավ՝ արավ, բայց նորը չհասցրեց ավարտել: Պատերը ո՛չ ներսից, ո՛չ դրսից սվաղված չէին, ու քանի որ շարելիս խիբարը խնայել էին, ինքն էլ չէր հետևել, մեծ ու փոքր շատ թափանցիկ ծակեր կային: Մայրս դրանք մի կերպ փալաս-փուլուսով փակել էր, բայց արդյունքը շատ էլ չէր: Մի խոսքով, ցուրտը բնակվում էր մեր տան մեջ...

Այ մարդ, դե տունդ կառուցի՝ նոր գնա էլի:

Մի շաբաթ չանցած, կապոց ստացանք փոստով: Ուրախացած վրա պրծանք:

Ով գիտի ինչ՞ եր է ուղարկել մեզ համար պապան: Պատառոտեցինք կապոցը... Դե, ի՞նչ ասեմ, իր հագի շորերն ու կոշիկներն էին: Քթներս կախ՝ հեռացանք:

Հին, կիսափուլ, այսպես ասած՝ զգեստապահարան ունեինք, դեղին գույնի (շիֆոներկա, ինչպես մայրս էր ասում), ճռռացող դռներով, մայրս էդ կապոցը պահեց դրա մեջ:

Գուցե էդ օրվանից, ասել է թե՝ հորս գնալուց հետո, Ստեփանավանը՝ մինչև նրա վերադառնալը ու հետո էլ, դարձավ ինձ համար պատիժ:

Ինչո՞ւ:

Որովհետև ամեն ինչ թաց էր, թաց, խոնավ աշխարհ: Փողոցները, մայթերը անբարեկարգ, ցեխ, մեծ ու փոքր ջրափոսեր, թացությո՛ւն, թացությո՛ւն...

Ինձ էդպես էր թվում, էդպես եմ հիշում, քանի որ...

Լավ, մի քիչ հետո կասեմ, իհարկե, պետք է մտածել, որ արևոտ օրեր էլ են եղել, սակայն ուղեղումս դաջված է անձրևը:

Անձրև, անձրև, անձրև՝ սառը, տաք, մանր մաղվող, խոշոր կաթիլներով, մինչև անգամ՝ սելավներ, կարկուտ...

Ձյուն: Տեր Աստված, էդ ինչքա՜ն ձյուն էր նստում, մետրանոց, բա՛հ, իմ ժամանակ:

Մայրս դուրս էր գալիս պատշգամբ՝ ձեռքի փալասը թափ տալու, նայում էր ամպամած երկնքին ու. «Արի, արի, անտեր անեմ քեզ, քիչ ես եկել, աշխարհը փտացրիր...»:

Պատերազմ է, բնական է, որ ամեն ինչի պակասություն կա. ուտելիքի, հագնելիքի... տաքության: Ու ես ոտնաման չունեմ: Կարգին ոտնաման չունեմ, էդ պատճառով էր, որ անձրևը, ինձ թվում էր, թե ի հեճուկս ինձ էր թափվում, թե իմ անձնական թշնամին է՝ դաժան ու անխիղճ: Ուզում է ինձ աշխարհքից վերացնել: Իրականում, մի ամբողջ պատերազմ ու հետո էլ իմ ոտքերը թաց էին: Էս մեր ժամանակներում ինձ ո՞վ կհասկանա, հիմա ո՞վ է բոբիկ որ...

Կռիվս մորս հետ, որ մի անգամ եմ արել, բայց և այնպես, իմ կողմից ստորություն էր նրան երեսով տալը, թե. «Պապան չասա՞ց, որ էրեխեքի ոտները չոր պահես»:

Մայրս մեղավորի պես գլուխը կախեց, լուռ մնաց: Ասենք, ինքը ոչ էդքան փող ուներ (ո՞ր մեկի համար), ոչ էլ խանութներում կոշիկ կար: Չգիտեմ, գուցե և կար, բայց մե՞զ ինչ...

Դեհ, գնա դպրոց: Մայրիկիս գործած գուլպաները՝ տաք ու փափուկ, հագնում էի, վրայից թերթ-մերթով փաթաթում: Միամիտ տղա: Մինչ դուրս գնալս երանություն էր, հետո՛...

Հետո հագնում էի ներբանները ճեղք տված ոտնամաններս: «Վազիր, այ տղա»,- ասում էի ինքս ինձ ու խելագարի պես վազում, համա թե ո՞նց կփախչես, ո՞ւր, էս ցեխից, անձրևից, ջրափոսերից... է-է-էհ-հ...

Դպրոց չհասած, արդեն ոտներս ջրի մեջ ճպճպում էին: Դասարանում մարմնովս մեկ կպչում եմ բարձրաբոյ, սև ներկած թիթեղյա վառարանին՝ մեջքս չորացնում: Իսկ ոտնե՞րս... Հո չե՞մ կարող դասարանի առաջ բոբիկանալ, թե ինչ է, ոտներս տաքացնում եմ: Մինչև դասերի վերջը մի քիչ ցամաքում էին, էն էլ իմ մարմնի, այսինքն՝ խեղճ ոտներիս հաշվին:

Ում ոտքերը երբևէ էդպես թաց են եղել, կարող է պատկերացնել, թե դա ինչ նողկալի տանջանք է: Բայց դեհ, չէ, էդ տեսակ մարդ դժվար գտնվի հիմա և, փառք Աստծո:

Ու մի օր, մի անձրևոտ ու անպետք օր, կայծակի պես միտքս փայլատակում է, փայլատակելս ո՞րն է՝ ճայթում է:

Վարժուհուց թույլտվություն չվերցնելով, թռա տեղիցս ու պ՞ուկ՝ դեպի տուն:

Մի շնչով հասա, «շիֆոնյերկայի» դռները տեղահան անելով բացեցի և... Եվ, ահ ու սարսափ... շորերը կան, կոշիկները՝ ոչ:

Մա-մա-ա՛,- լեղապատառ ճչում եմ,- ո՞ւր են հորս կոշիկները:

Ինչի՞դ են պետք,- հարևան սենյակից հարցնում է մայրս:

Պետք են, էն էլ ո՞նց են պետք:

Էդտեղ են, վերին թարեքին դրած:

Մերս կողքիս է արդեն, նայում է, թե ինչպես եմ փոխում թաց գուլպաներս, ինչպես եմ հագնում հորս, դեռ շատ չմաշված կոշիկները:

Այ տղա, բա հերդ որ գա, ի՞նչ է հագնելու, համ էլ մեծ են ոտներիդ:

Տո, մեծ ու փոքր ո՞վ է հարցնում, այ մեր:

Իհարկե, մուշտարու աչքով զննեցի հորս ուղարկած էդ գանձը: Ներբանները մի քիչ բարակել էին, կրունկները մի կողմի վրա մաշված ... «Էս ո՞նց ես քայլում, հայրիկ, էսպես կրունկ կմաշե՞ն»,- նախատինքով մտածեցի ես:

Ինչևէ, կարևորը ծակուծուկ չկար:

Հրա՛շք, հրա՛շք, հրաշքություն...

Մի քանի ամիս հորս կոշիկներն ինձ հարազատի պես ծառայեցին. «Պապա ջան, պապա ջան: Ոտքերս չոր են պահում, իմաց կաց: Քու ոտնամանները...»:

Էդպես:

Հետո սկսվեց... սկզբից պոկ ընկավ աջ ոտիս կոշկատակը, հետո ձախը, ու աշնանը, երբ դարձյալ սկսվեցին անձրևները...

Գնացի Աղաբեկ պապի մոտ: Մեր, էսպես ասած, կոշիկ նորոգողը, այսինքն՝ «փինաչին»: Փորը անճոռնի դուրս ցցած, կարծես ձմերուկ էր կուլ տվել, ցածրիկ-մածրիկ ծերուկ, զարմանալի հաստ բեղերով ու երբ ծամում էր անատամ, մաշված լնդերով, բեղերը վեր ու վար պարում էին: Թարսի պես ճաշի ժամին էի հասել: Այլումինի փոքրիկ պղնձից տրորած կարտոփ էր ուտում, հացի փափուկը մեջը բրդած: Նայում եմ նրա բեղերին ու փռթկում: Պապին զարմացած հայացք է նետում: Ձևացնում եմ, թե հազացի, բայց ծիծաղից խեղդվում եմ: Անլուրջ տղա, թիթիզ:

Ի՞նչ կա,- հարցնում է քթախոս պապը՝ ծամելու արանքում:

Ոտ-նն-աա-մմ-աա-նն-երս,- այծի պես մկկում եմ:

Տուր տենամ:

Տվեցի: Նայեց, զննեց չորս կողմից:

Սրանք իրենց դարն ապրել են: Ոչ կմեխվի, որ մեխես, ոչ էլ կկարվի, որ կարես:

Աղաբեկ պապի,- մլավեցի ես անտեր կատվի պես:

Դեն գցի, ասացի, վերջ:

Գլխիկոր հեռացա նեղ ու կիսամութ նրա խցիկից ու հանկարծ, երևի սրտնեղությունից, արցունքներ եկան աչքերիս ու մի քիչ լաց եղա, անձայն, իհարկե...

Չէ, չէ, ոտներիս դարդից չէ, հենց էնպես, իմ հավեսի համար:

Գիտե՞ք, մեկ-մեկ լաց լինելը, մանավանդ երբ վկա չկա, քաղցր բան է, փորձեք...

Հավեսի համար:

Աչքերդ ինչո՞ւ են կարմրել,- հարցրեց անհանգստացած մայրս:

Հեչ,- ասացի,- անձրև է:

Հիմա գալիս է իմ և դասարանցիներիս համար մեծ տոնի պես մի ուրախություն, հրճվանք, զվարճանք... Անսպասելի, հաճելի, անծանոթ, չտեսած ու չիմացած, չլսած... ու աներևակայելի... Մի ստվար խումբ նոր աշակերտներ Մոսկվայից, Խարկովից, Լենինգրադից: Էվակուացված:

Երկնային հրեշտակներ, մեկը մեկից սիրուն, ախորժելի, գրավիչ,

հմայիչ, համարյա արդեն օրիորդներ (ասել ասողի՝ ռսի կանանցից ավելի սիրունը կամ աշխարհում), ու էնքան արդեն ձևավորված, և էնքան առաջամիտ, խելացի ու կրթված...

Շշմեցինք, մի տեսակ խեղճացանք, բայց սրանք էնքան բարեհամբույր էին, պարզ, հաղորդասեր, մարդամոտ, որ մի շաբաթ չանցած՝ արդեն ջերմ ընկերներ էինք:

Դասարանի մթնոլորտը փոխվեց, նոր երանգներ ստացավ: Սոված, որձ շների նման, տեղացի տղաները սկսեցին հոտոտել նրանց: Մեջները տղաները քիչ էին, եղածներն էլ մի առանձնապես տեսք չունեին: Մերոնք բարձրահասակ, հմայիչ, պինդ, լոռեցի ջահելներ էին: Սիրո հրեշտակը նստարանից նստարան թևածում էր մեր դասարանում:

Ու դրանց մեջ ամենավատ հագնվածը ես եմ, ու էդ դեռ ոչինչ, էդ դեռ քիչ է ինձ, թարսի պես էլի բոբիկ եմ մնացել: Քոսոտ շան տղա, անհաջողակ ծնունդ:

Տղաները ինչ հնարքի ասես դիմում էին՝ նրանց գրավելու համար, ինչ սիրախաղեր էին: Ես կուչուհուպ եկած, իմ տեղում համեստորեն լռում եմ:

Հերն անիծած էս տեսակ կյանքի, բա լաց չլինես, ինչ անես... Հը՞: Էս տեսքով ո՞նց մտնեմ, ո՞նց երևամ Լենինգրադից եկած, ամենա-ամենա, ինչը... հրաշքը: Աչքս չեմ կարողանում կտրել դրանից, իսկ խեղճ սիրտս, էրված ու խորովված, կրակ տված, անհանգիստ դմփդմփում է կրծքիս տակ... վիրավորված... էն տեսել եք, չէ՞, նետը սրտի մեջ խրված...

Սեր: Էս ինչ բան է, այ տղա, էս որտեղից պոռթկաց ու մտավ մեջդ... Մինչև Ռիտայի գալը ո՞վ էր տեսել... Ով հիշում է իր առաջին սերը, ինձ կհասկանա...

Բարակ երկաթալար ճարեցի, կոշիկիս (ասենք կոշիկ) ներբանները կապեցի ոտնաթաթերիս: Չափազանց տգեղ, այլանդակ բան ստացվեց ու կարևորը՝ անօգուտ, որովհետև...

Որովհետև առավոտյան էլի անձրև էր մաղում, ու էլի ոտներս թացացան:

Երկաթալարերի՝ իրար փաթաթված ծայրերը շատ անճոռնի ցցված են վերև, բայց դե, ինչ անեմ, ճար չունեմ, դեղ ու դարման

անող չունեմ, հայրս՝ բանակում, մերս էլ՝ խեղճ ու կրակ մերս, հերոսաբար քաշում է իր ծանր բեռը:

Դե լավ է, ես հո պարտավոր չեմ նրան սիրել: Ռիտա՞ է, ինչ է, թող կորչի աչքիցս, թող թեկուզ էգուց հետ գնա իրենց երկիրը... Ոչ էլ կտանջվեմ, ոչ էլ կկարոտեմ...

Մտնում եմ դասարան և արագ ինձ գցում իմ տեղն ու ոտքերս թաքցնում նստարանի տակ: Ուրեմն թացությունը հերիք չի, տգեղությունն էլ՝ պոչից... Չգիտեմ, ապրումների՞ցս, թե՞ ջղերս չդիմացան, թե ինչ էր... դողէրոցքով տուն եմ գալիս ու էդ անտեր ոտնաման կոչեցյալները ոտներիցս պոկում՝ երկաթալարերի հետ ու կատաղի շպրտում, պատովն եմ տալիս...

Քոռանամ ես, տղա ջան, էս տաքություն ունե՞ս,- մայրս ձեռքը ճակատիս է դնում ու տագնապում,- էս վառվում ես, չարդ տանեմ...

Շտապ բացեց անկողինս, ինձ կոխեց վերմակի տակ: Էնպես է ինձ ծածկում, կոլոլում մայրիկս: Էհ, Օլգա Սարիբեկովնան, ձեռքերը տաք, սիրտը տաք... ու, «Աստված ջան, Աստված ջան» ասելով, ինձ էնպես է կոլոլում, որ թվում է, դարձա նորածին երեխա՝ խնամքով բարուրված:

Մամա,- ասացի,- ընկա մորս փորը...

Ծիծաղեց:

Հա՛,- ասաց,- ուրեմն, շուտով կլավանաս, էդ ապահով տեղ է...

Մայրս է, էհ, Օլգա Սարիբեկովնան: Իմաստուն կին, ձեռքը մաքուր, սիրտը մաքուր, հայոց մայր...

Հա, ի դեպ, մեծ դասամիջոցին, սկուտեղ դարձրած լայն մի տախտակի վրա, աշակերտների համար հարյուրգրամանոց հավասար կտորներ արած հաց էին բերում: Սև հաց էր, փափուկը՝ թաց խմոր: Ուսմասվարը դնում էր սեղանին ու գնում: Նրա հետևից, դուռը փակվելուն պես, քառասունհոգանոց դասարանով, ուրուրների նման հարձակվում էինք էդ կտորների վրա: Ու ես առաջինը, քանի որ պետք էր չորուկ կողովը (գարբուշկա) ձեռք գցել... Ռիտայի համար, ինքը երբեք չէր մտնում էդ հրմշտոցի մեջ: Հացի կտորը պարզում էի, ամոթից կարմրում էր, ժպտում ու շոյում... ձեռքս:

Մինչև վերադառնում էի, ինձ մնացած էլ չէր լինում, մի փոքրիկ, փշրված կտոր կամ բոլորովին ոչինչ: Դեհ, սոված էրեխեք...

Հայ խմացրեց իր ձեռքով՝ հոգապահուստ մոռի մուրաբան կերցնելով...

Տաք անկողնումս, անուրջների մեջ էի, տենչանքներս, երազներս ինձ տանում էին վեր, դեպի ամպերը (ափսո՛ւս, էդ անտերը շատ է ջուր թափում մեզ վրա)...

Վերջերս Ռիտան գլուխը թեքեց ինձ, գտավ վերջին նստարաններին, ու թվաց, թե կարոտով նայեց: Երկար նայեց ու հանկարծ լայն ու լիքը ժպտաց...

Պատերազմից առաջ մեր տան մի սենյակը վարձով տալիս էինք հովեկների՝ Թիֆլիս քաղաքից եկած կեկելների: Դրանք էին, որ մորս անուն-հայրանունով էին կոչում: Մի անգամ մեր կենվորները հյուր գնացին, ու զարմանալին էն էր, որ ինձ էլ հետները տարան (կլինեմ չորս-հինգ տարեկան): Կերան-խմեցին, մի քիչ էլ ինձ տվեցին, վերջում՝ խաղող ու դեղձ: Գովելով հայոց խաղողը, վայրկենապես խփշտեցին, հետո անցան դեղձին...

Դեղձ:

Դեղձ ոչ տեսել եմ, ոչ կերել, ո՞ւմ դարդն էր ինձ դեղձ առնել:

Մանկությունից էնքան ամաչկոտ էի, որ եթե մերս ուղարկում էր հարևանի տուն՝ մի բան ուզելու, դրսում կանգնում էի ու գալիս ասում, որ տանը չեն: Էդքան ամաչկոտ: Հիմա սրանք մեծ ամանը լիքը դեղձը կերան, ինձ չտվին, բայց ամանի մեջ մնացել է խոշոր, կարմրաթուշ, գեղեցիկ մի դեղձ: Չեն տալիս, քեֆները լավ, զրույց, ծիծաղ-միծաղ... Իսկ ես... (խորամանկ շուն), ես անթարթ աչքս տնկել եմ էդ դեղձին... «Արի, արի, ղեղձիկ ջան, արի, արի իմ կուշտը... Քեզ ուտեմ...»: Էնքան նայեցի, որ կեկելներից մեկը նկատեց ու էդ դեղձը դրեց իմ առաջը: Ա՜յ քեզ համառ իշուկ... Շատ էր համեղ, արժեր...

Մեկնելուց առաջ մեր տան կենվոր կեկելն իր տղայի կիսամաշ սանդալները չուզեց բեռ անել, տանել: Ցուցադրական, էնպես որ մերս էլ տեսնի, նվիրեց ինձ: «Այ տիկին, տոտա, էս ամառ սա ինձ յոլա կտանի, ձմեռն ի՞նչ անեմ, հը՞»: Մտքումս եմ ասում, էնպես եմ խոսում, կարծես էդ քաղաքի կինը ինձ մի բան էլ պարտք է: Փսլնքոտ, անշնորհակալ շան թուլա...

Կարոտն ինձ խեղդում է, բայց և կատաղությունս, քանի որ գիտեմ, որ ոտնաման չունենալով՝ դպրոց չեմ գնալու:

Քեռիս՝ Հմայակը, եկավ մեր տուն Ագարակ գյուղից: Սրան բանակ չտարան, քանի որ հազարափեշակ մարդ էր, անփոխարինելի. կով կթել, խոտ հնձել, սել սարքել, գերանդի սրել... Խոշոր մարդ էր, երկար քթով ու միշտ մինչև ատամների ցուցադրության ժպտացող:

Բրոնյա էին տվել...

Եկավ ու իրենից շատ գոհ, դիմացս նստեց:

Քվոր տղա, իմացել եմ, տկար ես:

Մի քիչ:

Ինչի՞ց ես խեղճացել:

Հեչ, երևի մրսել եմ:

Լավ, լավ,- արտասանեց քեռիս, ծոցից հանեց մի զույգ տրեխ ու, թագավորական ժեստով, մեկնեց ինձ:

Ես եմ կարել հատուկ քեզ համար, քրոջ որդի: Գիտե՞ս, քեզ ինչքան եմ սիրում:

Ըհը:

Գիտե՞ս, թե՞ չէ, կարգին ասա, լակոտ,- կեղծ բարկանում է քեռիս:

Գիտեմ, քեռի ջան, շնորհակալ եմ:

Դեհ, քեզ հալալ, բարով մաշես, ես գնացի:

Քեռին եկավ մեր բակը,

Դու լու, լու, դու լու, լու մեր բակը...

Մի ջուխտ չարուխ շալակը...

Դու լու, լու, դու լու, լու շալակը...

Ապրես, ախպեր ջան,- մայրս քրոջ ջերմությամբ գրկախառնվեց քեռուս հետ:

Մերս ու ես սևեռված մտիկ ենք տալիս տրեխներին, քեռուս նստած աթոռին դրած: Շատ գեղեցիկ են, շատ վարպետորեն սարքած: Ինչի՞ ենք էդքան երկար նայում, չեմ հասկանում. նա ի՞նչ է մտածում, ես ի՞նչ եմ մտածում... Ու հանկարծ ծիծաղս բռնում է... Մայրս, կարծես ինձնից վարակված, միանում է ինձ... Նա էլ է ծիծաղկոտ:

Էգուց կհագնես, կգնաս դպրոց,- ասում է մայրս, բայց մի տեսակ անվստահ:

Ի՞նչը կհագնեմ:

Քեռուդ բերած տրեխները, էս ինչքան էլ շնորհքով է կարել:

Իսկապես, շատ գեղեցիկ էին տրեխները, հպարտ, վեր ցցված քթերով, կապերը գույնզգույն, կարմիր, կապույտ, դեղին՝ մեջ-մեջ հյուսած, չալպտուրիկ (հավանաբար քեռակինս էր մանել): Մի խոսքով, ժողստեղծագործական տան ցուցահանդեսի նմուշ:

Կհագնե՞ս,- անվստահ հարցնում է մայրս:

Հա... Այ, եթե մի հատ էլ արխալուղ ճարես, մի հատ էլ լայն լաթագոտի, մի հատ էլ պոպոզավոր գլխարկ: Հետն էլ արծաթյա պատյան՝ խանչալով...

Նա հումորս հասկանում, ժպտում է:

Հա, ուրեմն հետաքրքիր մարդ էր մերս: Գյուղում ծնված, մեծացած, «լիկբեզի» գրագիտությամբ, աշխարհիկ տիկնոջ հատկություններ ուներ: Շատ էր սիրում վեպեր կարդալ, բարձրաձայն, փոքր ինչ խզված ձայնով: Գիրկապ էր անում, երբեմն էնպես էր կլանվում, որ գործ-մորձ, տուն-տեղ, երեխա մոռանում էր...

Ասում եմ՝ հումորս հասկացավ, բայց ես ավելի քան վստահ էի, որ նա իրեն թույլ չի տա «տրեխավոր տղա» ունենալ: Երբե՞ք: Օլգան:

Ծիծաղս նորից է բռնում:

Տեր Աստված, ինչքան ծիծաղկոտ տղա էի... ի՞նչ եղավ...

Օլգան հարցական նայում է ինձ.

Հը՞:

Պատկերացնում եմ, ինչ հոմերական հռհռոցի կարժանանամ դասարանում... Ռիտան էլ կասի:

Ռիտա՞ն ով է,- շատ հետաքրքրված, չափից ավելի շատ, հարցնում է մայրս:

Ռիտան մեր դասարանի ամենաաչքի ընկնող աղջիկն է:

Ռո՞ւս է:

Հա:

Ասում ես՝ ամենասիրո՞ւնն է:

Բա, բա:

Դրանք սիրուն են, տղա ջան,- ակնհայտ նախանձով, գլուխը աջ ու ձախ շրջելով, երգեցիկ ասում է բարձրաշխարհիկ ճաշակի տեր մերս:

Հա, կասի՝ էս ի՞նչ պապուասի սմոկինգներ են...

Պապուասն ինչ է:

Ժողովուրդ են, էլի:- Բահ, բա, ամենա... ամենա...,- գոռոզության ու երանության մեջ հեռացավ մերս ու սկսեց իր խզված ձայնով, ինչ-որ «Յար ջան, յար ջան...» երգ երգել: Ես ծիծաղից կոտորվեցի:

Բանն էն է, որ բարձրաշխարհիկ տիկին իմ մերը բացարձակապես զուրկ էր ռիթմի զգացողությունից և լսողությունից, բայց սիրում էր երգել... Ինչ կարող ես անել... Դպրոցում պարի խմբակ կար (կարծեմ երկրորդ դասարանում էի), ուշի ուշով հետևում էր, թե ե՞րբ ենք ելույթ ունենալու: Գալիս էր պարտադիր: Քնքուշ հայացքն ինձ վրա գցած, անմոռաց, եռանդուն ծափ էր տալիս՝ երաժշտության ու նաև տակտի հետ կապ չունեցող:

Էլի ծնողներ կային դահլիճում, նաև՝ դասատուներ: Նայում էին մորս՝ ձեռքի ափով բերաններն էին փակում ու փռթկում...

Ես ամոթից գետինն էի մտնում: Մի անգամ համարձակվեցի, ասացի. «Մամա, մի արի մեր ելույթներին»: Զարմացավ, վիրավորվեց ու էնպես ջգրվեց վրաս, մնացի սառած: Մի հատ էլ բռունցքով քիթ-մռութիս հասցրեց...

Քո գործը չի, անհաջող ծնունդ... Ինձ բան է սովորեցնում... Սրան տեսեք...

Էդ ոչինչ, բայց տեղն ընկած տեղը պարում էլ էր... Վա՛յ... էդ արդեն ոչ տեսնեք... Ներիր, մերիկ ջան...

Կարճ, մամա, ես դպրոց գնացողը չեմ սրանցով, սրանք հագնողը չեմ:

Մի օր մայրս երկար բացակայեց ու տուն եկավ ձեռքին կախ պահած մի զույգ կիրզվի սապոգներ...

Էհ... էհ... դրանից մեծ նվեր լինո՞ւմ է:

Դե որ էդպես է, մի քիչ էլ գովեմ մորս: Ուրեմն, անսահման վառ երևակայություն ուներ, չեղած տեղից էնպիսի խորակներ կսարքեր, որ համից չէիր կշտանա, և ամեն, ամեն ինչը, որ կպչում էր նրա ձեռքին, գեղեցկանում էր: Հաշյա էր անում՝ գեղեցիկ էր, գաթա էր թխում՝ գեղեցիկ էր, շոր էր կարկատում՝ գեղեցիկ էր, բորշ էր եփում՝ գեղեցիկ էր:

Բախտ ունեցա ժամանակին խմբով Արևմտյան Գերմանիա գնալու

և ճաշին նկատեցի, որ դրանցը ընտիր սերվիզներով գեղեցիկ, գեղեցիկ ուտելիքներ են, հա՛, բայց իմ մոր սարքա՛ծը:

Չէ, իհարկե, էդ համը չունեին: Բա՛հ:

Կարճ. հաղթանակած, հպարտ, ու չոր ոտքերով, մտնում եմ դասարան...

Ձմեռվա կես է, մեր վառելիքը պրծնելու վրա է: Մայրս խնդրում է, որ գնամ անտառ՝ չոր ցախ հավաքեմ: Տո, ինչ ասես, որ չեմ անի մորս քաղցր խաթեր: Գնում եմ: Կիրակի օր է, արևոտ: Որ ասեմ մի մետր ձյուն նստած, հավատացեք: Տեղեր էլ կան անտառում, փոս տեղեր, ձնով լցված ու մեկ-մեկ մինչև գոտկատեղս խրվում եմ դրանց մեջ: Բայց ես պինդ տղա եմ, ուժեղ: Ցախը հավաքում, ի վերջո, մեծ տանջանքով, էստեղից-էնտեղից քարշ տալիս, սարքում եմ մեծ կույտ: Թոկերով պինդ ձգում, կապում եմ, մտնում տակը ու գցում շալակս: Ծանր է, բայց պիտի տեղ հասցնեմ, վստահ եմ: Թե չէ երեխեքը կսառչեն:

Հիմա էնպես է, որ մեր փողոցի հարևանուհիները, մինչև անգամ գիշերները, գալիս ինձ ձեն են տալիս, քունս հարամ անում:

Սոսիկ, կովը ծնում է, արի քոմագ արա (տղամարդիկ բանակում են, չէ՞): Գնում եմ, կովը պառկած, տնքում է ցավից: Հորթի առաջին ոտքերը երևալուն պես, պետք է խսիր-մսիր լինի ձեռքիդ, որ սոթ չտա, որ պիտի բռնես ու քաշես: Քոմագ անես, որ կովն ազատվի: Պատահում են մեծ գլխանի հորթեր, ու մինչև դուրս ես քաշում, հանում, հոգիդ էլ հետն է հանվում...

Էնպես որ, ես դժվար ու ծանր գործերի սովոր եմ: Աշխատունակ եմ: Միով բանիվ, գյուղացի պինդ տղա եմ:

Բայց էս անտեր ցախը, համը հանել եմ, էնքան եմ ագահաբար հավաքել, շատ ծանր, ողնաշարս ջարդվում է:

Էդ ոչինչ, անտառից դուրս եկա մի կերպ, կարող եմ ասել՝ չոքելով, սողալով, մեծ չարչարանքով, ու դեռ մի չորս, հինգից ավելի կիլոմետր ճամփա ունեմ կտրելու, էդ ինձ քիչ է, կոշտ ձյունը սկսել է թափվել, քամին էլ հետը՝ բուք ու բորան: Ու դա էլ ոչինչ, հանկարծ զգացի, որ ոտներս թաց են: Պա՛հ, քո ցավը տանեմ, դու մի ասա, անտառի խորքերում ձյունը սապոգներիս ճիտքերի արանքներով լցվել էր ներս ու հիմա իմ ոտքերի ջերմության հաշվին հալվել:

Քամին կամաց-կամաց զլում է, սառնանում ու ոտներս հետը փետանում են, ձեռքերիս դեռ թաթման կա՝ մորս գործած, ոտներս ի՞նչ անեմ, ցուրտը, ավելի ճիշտ՝ սառնամանիքը մի ուրիշ տեսակ ցավ է պատճառում մարդու մարմնին, ցավը աստիճանաբար անզգա է դարձնում սառած օրգաններդ, օրինակ՝ քիթդ կամ ականջդ սառում են, հետո՝ անզգայանում: Հետո պո՞կ են գալիս, ի՞նչ են լինում. ասում են՝ ցրտահարված ոտք և նման բաներ:

Հանկարծ հիշեցի Ջեկ Լոնդոնի «Հյուսիսային պատմվածքներ»-ի հերոսներին: Հզոր կամքի տեր մարդիկ, որ պայքարում են տարերքի դեմ ու հաղթում, բայց նաև կործանվում, ձների տակ են մնում...

«Էէհե՛յ, տղա, քեզ պինդ պահիր, տղամարդ չե՞ս»: Եմ: Բայց ի՞նչ անեմ էս չար ու դաժան բնության հետ...

Բաներ կան, որ մարդուն ստիպում են չսիրել կյանքը: Կան: Մեկը էս անտեր սառնամանիքն է...

Լաց եղա, խղճացի ինձ, խոշոր-խոշոր արցունքներով, կաթիլներով, որ չգլորված մինչև վերջ, այտերիս վրա սառցակտոր էին լինում ու իմ վիճակը դարձնում ավելի ողորմելի: «Ամո՛թ է, այ տղա, քեզ տղամարդ ասողին...»:

Հերն էլ անիծած էս տեսակ կյանքի, էս չվերջացող թացության, էս չվերջացող ճանապարհի...

Թող քամին ինձ շուռ տա, վեր ընկնեմ, բուքը գա ինձ ծածկադամփոց անի, ու գիշերով գայլերը գան. հոտոտելով՝ ինձ ձյան տակից փորեն, հանեն, հոշոտեն...

Թող մերս լաց լինի դառը-դառը. թող հերս գա նստի գերեզմանիս... «Ի՞նչ գերեզման, այ տղա, գայլերը քեզնից հետք կթողնե՞ն»: Թող Ռիտան իմ դարդից մնա տանը, դառնա ծերացած օրիորդ, թող կնճռոտվի, ճմռթվի, տգեղանա, կռանա, դեղնի առանց ինձ... վրիժառու եմ, է՛հ, դու մի ասա, չար վրիժառու եմ...

Գնալով տեսադաշտս փակվում է, բան չեմ տեսնում, սպիտակ ձյունը վարագուրել է չորս բոլորս, ձյան փաթիլները խելակորույս պար են բռնել ու ես ծանր հևալով, լեզուս դուրս գցած շան նման վնգստում եմ...

Ոտքս ընկնում է խարդախ մի փոսի մեջ ու ես բերանքսիվայր

փռվում եմ փափուկ ձյան հաստ շերտի վրա... Օխա՛յ... ի՞նչ հաճելի հանգստություն, ու չնայած ցախի հսկա կույտը, որ արել եմ, ճզմել է, տպել տափին, աչքերս փակվում են, ու ես ընկնում եմ քաղցր-քաղցր նիրհի մեջ... ու ինչ՞ եր եմ տեսնում, ի՞նչ անապատային միրաժներ... Տաք ավազի կույտեր, և ես դրանց մեջ արևայրուք եմ ընդունում...

Բա չէ, արևայրուք, շատ բան կուզես, քոնը էս է՝ էս ձյունը, ցուրտը... Երազողիս տեսեք, ի՞նչ է ուզում...

Քամին վհուկի նման, չարագուշակ ոռնալով, վզվզալով ձյան բարակ շերտեր է քշում վրաս... Ու հանկարծ տեսիլքի նման աչքիս առաջ հայտնվեց Ռիտայի դեմքը. «Շարժվի՛ր», հրամայական ասաց. «Վե՛ր կաց, ոտքի ել, քայլի՛ր, քայլի՛ր»... Ու հանկարծ ինձ տեսնում եմ գայլերի ոհմակով շրջապատված, ոռնում են՝ երախները լայն բացած, էս է, էս է հարձակվելու են...

Ու հանկարծ զիլ զանգակ ձայն... վե՛ր կաց, շարժվի՛ր... շարժվի՛ր... ոտքի ել...

Աստված իմ, Ռիտայի ձայնն է... Ուշքի եմ գալիս. «Աղջի, էդքան քնքուշ, քաղցր ձայնով էդ ինչպե՞ս ես կարողանում պատռել էս ահավոր բուքը»: «Ուժ տուր քեզ, այ տղա...»: Բարձրանում եմ աջ ծնկիս՝ մռնչալով, հետո ձախ... ու առաջ, առա՛ջ, քա՛յլ-քայլ: Մարդու ամենամեծ տաղանդը քայլելն է... Աստծու տված մեծ պարգևն է...

Չէ, ոչինչ էլ չեղավ: Շարժվեցի, բեռս հասցրի տուն:

Կարևորը էդ էր: Բոլոր անեծքներն էլ հետ վերցրի: Հանգիստ, անդարդ ապրեք...

Տուն մտա, ավելի ճիշտ կլինի ասել, չորեքթաթ հասա վառարանին ու խտոր ընկա...

Վա՛յ էս ի՞նչ արեցի ես, էս ի՞նչ օրը գցեցի երեխիս, վա՛յ քոռանում եմ, վա՛յ:

Շտապ վառարանը իմ բերած չոր ցախով կրակ տվեց: Մերս սապոգներս քաշեց ոտներիցս, չոր գուլպաներ բերեց, հագցրեց իր ձեռով, հետն էլ ոտներս ճմռելով տաք, հաստլիկ մատներով ու բերանի գոլորշիով, հետ էր բերում ոտներիս տաքությունը: Բերեց իր հաստ շալը գցեց վրաս, ու քնեցի...

Ուշ զարթնեցի, բոլորն արդեն պառկել էին, մերս խոհանոցում ինչ

որ բզբզում էր: Ձեռքս տարա սապոգներիս, որ վառարանի տակ էին: Նույն սառը, թաց, լմփոշացած ճիտքերով: Ախր, չէ՞ որ վառարանն իր տակը չի տաքացնում, չէ՞ որ տաք օդը վերև է բարձրանում: «Այ տղա, ֆիզիկա չե՞ս անցել»: «Անցել եմ, բայց մոռացել եմ, գլխիս խե՞լք է թողել Ռիտան...»:

Տեսա, որ վառարանը հրես հանգչելու վրա է, սապոգներս կոխեցի նրա հետնամասում եղած ջեռոցի (դուխովկա) մեջ: Էդտեղ, սովորաբար, կարտոփ էինք խորովում, հա, ուրեմն դրեցի ու սողնակն էլ պինդ քաշեցի: Մտածեցի, մինչև լույս ոտնամաններս էդ մարմանդ ածուխի հետ կչորանան:

Առավոտյան շուտ քույրիկս՝ Սեդան, հրում է ինձ ու ստից լաց լինելով, երգեցիկ խաղ ասում.

Վեր կաց, իմ ապերիկ, վեր կաց, Կիկոս ջան, գնացի մերի՝ ցախը բերի... կոշիկներս կերի, վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ, իմ Ձախորդ Փանոս ջան...

Սարսափած աչքերով նայում եմ վրան:

Ի՞նչ է եղել, ախչի...

Մաման առավոտ կանուխ վառարանը ցախ էր լցրել, կրակ տվել ու քիչ հետո հոտից գլխի ընկել, որ... Մի խոսքով, սապոգներդ խորովվել են, կարող ես ուտել... հա, հա, հա, հա, հա, հա... ափսոս, կարագ չունենք, քսես վրան...

Մեկ ասի՝ ծեծեմ, բայց ինքը ի՞նչ մեղավոր է: Ինքը ընդամենը անսիրտ է:

Ո՞ւր է մաման,- կատաղած հարցնում եմ:

Գնացել է հացի հերթ բռնի:

Մոլորված, շփոթված նայում եմ կոշտացած, քարացած, մոխրագույն, չէ, արդեն ածխի նման ոտնամաններիս:

Վա՛յ, Օլգա, վա՛յ... էս ի՞նչ բերիր դու իմ գլխին... մի ամբողջ օր հետը չխոսեցի, պատժեցի...

Փոքրիկ սղոցով ճիտքերը կտրում եմ: Փորձում եմ հագնել. չի ստացվում: Կտրելով, իջնելով, ճիտքերից ազատվում եմ, սապոգներս դառնում են սովորական կոշիկների նման մի բան, բայց շատ անճոռնի, կոշտ: Ոտներս մի կերպ խցկում եմ դրանց մեջ: Հո չեն սեղմում էդ անտերները, հո չեն ցավեցնում...

Դիմանում եմ, պետք է, որ մեռնեմ էլ, դիմանամ, քանի որ ամեն Աստծո երեկո Ռիտայի հետ ժամադրվում ենք... Նրա գնալու օրերն են, ու մենք հուզմունքից չգիտենք ինչ անենք, որ պատովը տանք մեզ: Սոսկալի բորբոքված ենք, չէ՞ որ շիկացած լավան մեր մեջ եռում է, բլթբլթում: Մեր ջղերը ծայրաստիճան լարված, մենք անզուսպ ու նյարդային, զգայուն ու փխրուն, և՛ խիզախ ենք, և՛ երկյուղած ու հասունացող կամ արդեն հասուն պատանիներ ենք...

Եվ եկավ...

Եկավ նրա գնալու վերջին օրը... Մենք հանրային մեր այգում ենք, մթնով ծածկված սոսենու, մեր պատսպարան, հաստաբուն ծառի տակ:

Այգին էդ տարիներին ո՞վ կխնամեր: Մոլախոտն ու շաղոտ-մաղոտ բուսականությունը բարձրացել է մետրից ավելի, մենք՝ դրա մեջ խրված: Իմ ոտներն էլի թացոտ են, քրչոտ ոտնամաններս կոշտուկներ են առաջացրել, ցավում են, բայց դա հեչ պետքս էլ չի:

Իմ Ռիտայի հագին, նրա փոքրիկ ոտիկներին երկարաճիտ բոկոտիկներ են, հուրախություն ինձ, կարմիր գույնի, ներսից էլ երես քաշած տաք, մազախավ...

Ծառի լայն տերևների վրա մնացած սառը, խոշոր կաթիլները երբեմն կաթկաթում են մեզ վրա...

Գուցե ծերուկ, իմաստուն ծառը խորհուրդներ ունի մեզ ասելու, հուշելու բան ունի: Գուցե ասում է՝ գահավիժեք, խորն ու տաք, չնայած դեռ անծանոթ անդունդը, նրա շիկացած լավայի մեջ:

Եվ մենք կարծես լսում էինք նրան, նրա հուշարարությունը, նրա անձայն աղաչանքը, որ մեզ է հղում խոշոր-խոշոր անձրևակաթիլների տեսքով:

Հրաշք է. մենք ջահել, հզոր, մենք գերված միմյանցով, մենք էրված միմյանցով, բորբոքված, բոց ու կրակն է շռնդալից մեզ ծեծում, մենք...

Մենք պինդ, պինդ ու նաև՝ խնամքով ու քնքշանքով գրկել ենք իրար: Պինդ, պինդ կպած ենք միմյանց: Եվ ի՞նչ է սերը, եթե ոչ վայրագ ցանկություն հպվելու...

Եվ ուրիշ տեսակ սեր լինո՞ւմ է...

Ո՛չ, չգիտեմ: Վերջապես իմ բանը չի, էս պահին, էս ժամին, էս գիշերը իմ բանը Ռիտան է...

Արցունքախառն աղի համբույրներ, հոգոցներ, կարճ, հանկարծ անտեղի, անսպասելի քաղցրիկ ծիծաղներ, ծանր, խուլ, տանջալի ղունղուններ՝ միախառնված քնքուշ խոսքերին և կանչեր, կանչեր բնության դրվածքով, համառ, հետապինդ, պահանջկոտ...

Եվ աշխարհը, կյանքը մերը լինելը, ամենը, ամենը մեզ համար դառնում են եդեմական մի տեղ, դրախտ, որից մեզ էս առավոտ դուրս են դնելու...

Եվ ես որտեղից խոսքեր գտնեմ, ո՞ր ընդերքները պեղեմ, որ ստույգ նկարագրեմ նրա գեղեցկությունը, նրա բաց սրտի վեհությունը, նրա կանացի տաքությունը...

Չէ, թողնենք, հրեշտակներին հանգիստ թողնենք...

Պարպված, հյուծված, ուժասպառ, քամված, լույսը բացվելու հետ, բաժանվեցինք: Բաժանվեցինք, հույս չունենալով, թե մի օր կմիանանք...

Ինչո՞ւ: Չգիտեմ:

«Ես ինձ հետ երջանկություն եմ տանում».- դա նրա վերջին խոսքերն էին:

Պատերազմը վերջացավ, Ռիտան՝ Մարգարիտան, գնաց:

Հայրս եկավ, փառք Աստծո, ողջ:

Շուտով Կալինինոյում (հիմիկվա Տաշիրը) գործ ճարեց: Երկուշաբթի առավոտյան գնում էր, շաբաթ երեկոյան վերադառնում:

Հագիս դեռ փեթռակ ոտնամաններս են, որ էդպես էլ չկակղեցին...

Ուզում եմ ասել ոտնամանների պատմությունը դեռ չի վերջացել. սպասեք:

Սաքոն՝ հորաքրոջս տղան, գալիս է մեր տուն: Մի տարով ինձնից փոքր է: Ասում է.

Ապո, Կալդոնանց Սաքոյի տղա Վարոսը քարի գլխին տուն է սարքում, բանվորի կարիք ունի:

Մենք ի՞նչ բանվոր, Սաքուլիկ:

Ումի՞ց ենք պակաս, ցեխ-մեխ ենք անելու, խիբար ենք բարձրացնելու:

Ինչ պիտի տա մեզ: Օրն ինչքան:

Չգիտեմ, դեհ, ինչքան կտա, կտա:

Չեմ հիշում քանի օր աշխատեցինք, ստույգ առածս էլ չեմ հիշում, բայց գրպանումս իմ ոչ տեսած, ոչ էլ, իհարկե, ունեցած, խոշոր մի գումար էր:

Հաստատ գիտեի ոնց եմ ծախսելու: Ընկնում եմ դես ու դեն, խանութ, շուկա... Ամեն ինչ կա, մինչև անգամ Գերմանիայից բերած վարսավիրի ածելի, մկրատ, կանացի լաքած, նրբատեսք տուֆլիներ...

Աշունը մոտենում է, հետն էլ՝ անձրևները...

Գլխիկոր, անտրամադիր տուն եմ գնում: Մեր դասարանցի Չիտչյան Գուրգենը առաջս կտրում է.

Հը, տխո՞ւր ես, Ռիտայիդ կարոտե՞լ ես...

Գուրգեն, սրտովս գնա,- նեղված ասում եմ ես:

Ասա, ի՞նչ է եղել:

Ոտնաման չունեմ, այ թե ինչ:

Հա՜, դժվար գործ է... Լավ, մի բան կմտածենք:

Հաջորդ երեկոյան Գուրգենի հետ գնում ենք իրենց տանը բնակվող կենվորի մոտ: Ստեփանավանի զորամասի ինտենդանտ է (համբարակ): Միջահասակ, ցմփոր մարդ է, տարիքն առած, մեծ, կարտոփ քիթը միշտ կարմիր, քանի որ օր չկա, որ կարգին չկոնծի...

Փող ունե՞ս,- հարցնում է, իհարկե, ռուսերեն:

Այո:

Ինչքա՞ն:

Գրպանիս փողը հանում եմ, ցույց տալիս: Ձեռքիցս վերցնում, սկսում է ուշադիր հաշվել: Ես, շունչս պահած, սպասում եմ:

Լավ,- ասում է վերջապես,- քիչ է, բայց Գուրգենի խաթեր էգուց արի:

Աստված իմ, էդ ի՞նչ էր, հաջորդ օրը, որ իր մեծ պայուսակից հանեց, տվեց ինձ: Անգլիական զինվորականի մի զույգ բատինկաներ՝ թափ-թազա: Վերցնում եմ, նայում, ուրախությունից կոկորդս խեղդում է, ուրախությանս լացը հազիվ եմ զսպում, գրկախառնվում եմ Գուրգենի հետ, որ ներկա է, պինդ ու անկեղծ սեղմում եմ ինտենդանտի ձեռքն ու շնորհակալություն կրկնելով, դուրս գնում:

Հրճվանք:

Ինչպես նկարագրեմ նոր ոտնամաններս: Ուրեմն, քթները ուռուցիկ, պինդ, կրունկների շուրջբոլորը սպիտակ մետաղյա պայտեր: Չէ, սա սարքած չէ, սա էսպես կատարյալ ծնել են...

Քանի՞-քանի տասնյակ տարի է անցել, անգլիացիների էդ ապրանքը աչքիս առաջ է...

Ռիտա-Մարգարիտա, արի, արի մի տես՝ ի՞նչ է ոտքերիս, տես, հիմա ինչպես եմ քայլում, ինչքան է ինձ սազում...

Ու մի օր առավոտյան կողմ երազ եմ տեսնում, թե՞ ինչ է... Ինչ-որ ձայներ եմ լսում ու տեսնում, իրական տեսնում եմ, թե ինչպես են իմ ոտնամանները քայլում պատշգամբում... մղձավանջի մեջ եմ, քնած եմ, թե՞ արթուն...

Չեմ ուզում արթնանալ, չէ. կոպերս պինդ սեղմում եմ, պինդ փակում ականջներս ձեռքերիս ափով...

Թրըխկ... թրըխկ... թրըխկ...

Դա ի՞նչ է, էս իմ սիրտն է էսպես բաբախում, թե՞ ինչ-որ մեկը պատշգամբում է:

Տեղաշորիս մեջ հանկարծ ցցվում եմ, լարում ողջ ուշադրությունս. լոշտակ իմ ականջները, որսորդական շան ականջների նման, աջ ու ձախ, կարող եմ ասել, իննսուն աստիճանի վրա պտտվում են տեղում, գնում եմ էդ դոփյունների հետևից... էնպես եմ լարել լսողությունս, որ դրսում լուցկու հատիկի քուքուրթի թշշոցը լսում եմ... դրանից եմ գլխի ընկնում. պատշգամբում հայրս է:

Մեկ՝ դրըմբ, երկու՝ դրըմբ, երեք...

Մամա, էն ո՞վ է դրսում:

Հերդ:

Ինչի՞ չի գնացել աշխատանքի:

Սպասում է՝ զարթնես...

Մեծ սենյակ մտնող դուռը բացվում է...

Մայրս շտապով նստում է անկողնուս վրա:

Ինչի՞ գունատվեցիր, բալա...

Տղա,- արտասանեց հայրս ու վառած ծխախոտը ձեռքի մեջ ճզմեց կրակի հետ:- Տղա,- գլուխը կախ, իր թանձր ձայնով, բայց խուլ մրմնջաց հայրս...

Ես նրան էդպիսին չեմ տեսել, երբեք: Իմ արծիվ հեր... էդքան խեղճ ու մեղավոր:

Տղա, ներողամիտ եղիր...

Ու շուռ եկավ, որ գնա:

Կա՛ց,- բղավեցի ես հանկարծ, կիսամերկ տեղիցս ելա ու նետվեցի հորս գիրկը, կպա նրա չոր դոշին... իմ հարազատ հոր դոշին... Մորս փխրուն սիրտը փուլ եկավ:

Էս ի՞նչ եք անում ինձ հետ, ձեզ մատաղ,- հիստերիկ, ցավագարի նման ճչաց մայրս ու լաց եղավ բարձրաձայն ու խոսեց ժնգժնգալով.

Հազում է... հազում է, պատառոտված ոտնամաններով ո՞նց գնա գործի, հազում է, հազում է... ես ձեր երկուսի էլ չարը տանեմ:

Օլգա Սարիբեկովնա, համաձայն եմ, լաց եղիր, միայն թե հուզմունքից հանկարծ չերգես...

Հորս հոտը ես շատ էի սիրում, բա ուրիշ կերպ ո՞նց... Մերս ասում էր՝ պուճուր ժամանակ հորս ծոցին եմ քնել... կմոռացվի՞...

Անգլիական բատինկաները զինվորական... բա չէ մի... էդ ծովահեն բրիտանացիներին երբեք չեմ սիրել, դրանցից հեռու, թող կորչեն իրենք էլ իրենց... հագնվում եմ, որ գնամ դպրոց, դուրս եմ գալիս...

Բահ քու, էլի անձրև...

Մինչև օրս չեմ մոռանում հորս խեղճացած, մեղավոր ձայնը: Չեմ մոռանում էդ բատինկաները... Չեմ մոռանում ու իմ էության մեջ մինչև հիմա ապրում է (զարմանք բան) ռսի ծնած գեղեցկուհի աղջիկը... նրա կանաչակապույտ աչքերը, լուսնյակ դեմքը, հոլանի կռները, բուրմունքը... Չսպիացող վերք, ժամանակ առ ժամանակ ցավ է տալիս ու ես տնքում եմ (քյավթառ շուն, անկուշտ անտեր, ցնորվածի մեկը...):

Չեմ մոռանում, ախր ո՞նց մոռանամ... հերթով հագած իմ ոտնամանները, իմ գրեթե միշտ թաց ոտները (ներեք ինձ, տանջված իմ ոտներ):

Չեմ մոռանում Լոռվա երկինքը՝ վիհերը բացված:

Չգիտեմ, բնակա՞ն են մանկությանս, պատանեկությանս հուշերը, չգիտեմ: Կան ու վերջ, ոնց ուզում ես, հասկացիր...

Հիմա գրեցի, ի՞նչ եմ ուզում ասել սրանով...

ՈՉ ՄԻ ԲԱՆ...

Ինձ տանջող բաներ էին, գուցե էս գրվածքով ազատվեմ դրանցից: Դուռս խուփ անելու ժամանակն է... մի քիչ թեթևացած գնամ...

Չգիտեմ, կստացվի, չէ՞ որ հիշողը սիրտն է, մարդու սիրտն էլ չի փոխվում, բնավորությունը, մտածելակերպը փոխվում է, սիրտը՝ ոչ: Իհարկե, էս մեր անձև ժամանակները, «անժամանակ» ժամանակները, չարժե կյանքի խորքերը գնալ, ինչ-որ շերտեր փորել, իմաստները գտնել: Ինչի՞ համար, ո՞ւմ համար... դրա սպառողը չկա... էդ անողն էլ ես չեմ, իսկական գրողներ կան:

Ես հավեսի համար, եթե շատ անկեղծ լինեմ, հավեսի համար գրեցի:

Ես դերասան եմ՝ հավեսի համար եմ խաղում, հավեսի համար բեմադրություններ եմ անում, հավեսի համար շախմատ եմ խաղում...

Ձեզ էլ եմ խորհուրդ տալիս՝ ինչ-որ անում եք, հավեսով արեք, մեծ հավեսով... մի բան դուրս կգա: Էնպես որ, ուզում եք կարդացեք, ուզում եք՝ ոչ: Նայեք ձեր հավեսին...

Հաջող...

Չէ, դեռ սպասեք, ոտնամանների մի պատմություն էլ կա, ասեմ:

Իսրայելյան փողոցի վրա եմ ապրում, երկրորդ հարկում: Էդ ժամանակ խումբ էի ղեկավարում, որը Սումգայիթի, Բաքվի փախստականներին ֆինանսական օգնություն էր տալիս: Բոլորը տանս տեղը գիտեին: Տունս որն է, սարքել էինք գրասենյակ: Դռանս զանգը հնչում է: Բացում եմ: Վաղուց չսափրված, կյաժ մազերով, միջահասակ, նիհար մի մարդ է:

Ի՞նչ կա:

Բարև:

Շատ բարև:

Շահումյանցի եմ:

Հա... Շահումյանը տվինք, էլի,- ափսոսանքով, մի քիչ էլ նախատինքով, ասում եմ ես:

Ըդբես է ստացվում:

Հիմա ի՞նչ ես ուզում:

Մե աշե ոտերիս...

Աշում եմ: Աստված ջան, սև կալոշների մեջ, բոբիկ ոտներով: Դրսում էլի անձրև է, ցուրտ:

Բայց... բայց հանկարծ, անշնորհք ծիծաղս բռնում է, հո չեմ խեղդվում, հո չեմ երկտակվում:

Այ մարդ... Այ մարդ, էս դու որտեղից... Իմ մանկությունից... Կռանում եմ, դռան տակին դրած իմ ոտնամանները տալիս իրեն,- հագի, հագի... Կաց...

Այ կնիկ, մի զույգ գուլպա բեր... նոր չեն, բայց լվացված են, քաշի ոտներիդ...

Հագավ, ժպտաց.

Ղուրբանդ էղնիմ, ապեր...

Իհարկե, խաբեց, շահումյանցի չէր: Գյումրվա կողմերից, կարծում եմ, երկրաշարժից տուժած...

Բայց...

Բայց ես հո գիտեմ՝ ինչ բան են թաց ու սառած ոտները, ես հո գիտեմ՝ ինչ բան է ոտնաման չունենալը: